ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«09» 01 2019թ.
No 03/3.4/81978-19

ՄՈՒՏՔ No 50-20
14 01 2020թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ԶՈՀՐԱԲՅԱՆԻՆ
ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՊԱՐՈՆ Կ. ԹԱՄԱԶՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 24.12.2019թ. N 01/01/2260-19 գրության

Հարգելի պարոն Զոհրաբյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և 307-րդ հոդվածի 3-րդ մասը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

Օրենսգրքի՝

- 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս, *բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս*, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի,

- 380-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ նոտարական և (կամ) փաստաբանական գործունեություն իրականացնողները բնակչությանը ծառայություններ են մատուցում գործունեության (հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության) վայրից դուրս, պարտավոր են գործունեության վայր վերադառնալով՝ ոչ ուշ, քան երեք ժամվա ընթացքում, հսկիչ դրամարկղային մեքենա մուտքագրել մատուցված ծառայության դիմաց ստացված

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

գումարը, իսկ մեկ օրվա ընթացքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը տրամադրել կամ փոստով առաքել ծառայություն ստացողին:

Հաշվի առնելով վերոնշյալ կարգավորումները՝ գրությամբ բարձրացված հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ եթե կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս դրամական հաշվարկները չեն իրականացվում *կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով*, ապա ՀԴՄ-ի կիրառությունը պարտադիր չէ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

1/9/2020

X

ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝ ՎՄԸՍՎ ընթացակարգերի բաժին,
Հեռ. 060-544-648